

Մարմին, Անձ ու Յոգի

Արտաքին շրջանը նշանակում է մարդու մարմինը, միջինը՝ անձը, իսկ ներքինը՝ հոգին, կամ, ինչպես Պողոսն է անվանում, մարդու **մարմնավոր** (Ա Կոր. 3:1-3), **շնչավոր** (Ա Կոր. 2:14) և **հոգևոր** (Ա Կոր. 3:1) մասերը:

Մարմինը ցուցադրված է արտաքին շրջանակով՝ որպես նյութական աշխարհի հետ առնչվող մասը հինգ զգայարանների միջոցով, որոնք են տեսողությունը, հոտառությունը, լսողությունը, համը և շոշափելիքը:

Անձն օգտագործում է մարմնի հինգ զգայարանները՝ որպես միջոցներ նյութական երևույթներն ու պատմական իրադարձություններն ըմբռնելու, ինքնաարտահայտման և արտաքին աշխարհի հետ հաղորդակցվելու համար:

Անձի դարպասներն են երևակայությունը, խիղճը, հիշողությունը, դատողությունը և զգացմունքները:

- Անձի **երևակայության** դարպասը համապատասխանում է մարմնի տեսողության դարպասին, և այն **«աչքն» է**, որով անձը տեսնում է:
- Անձի **խղճի** դարպասը համապատասխանում է մարմնի **հոտառության** դարպասին, որով անձը որոշում է բարու և չարի առկայությունը:
- Անձի **հիշողությունը** դարպասը համապատասխանում է մարմնի լսողության դարպասին, որով անձը հիշում է այն, ինչ լսել է:
- Անձի **դատողության** դարպասը համապատասխանում է մարմնի **համի** դարպասին, որը թույլ է տալիս անձին համեմատել փաստերը, ինչպես համի զգացողությունը համեմատում է կերակուրները:
- Անձի **զգացմունքների** դարպասը համապատասխանում է մարմնի **շոշափելիքի** դարպասին՝ լինելով այն ձեռքը, որով անձը զգում է իր սիրելի անհատականությունը:

Յոգին տպավորություններ է ստանում արտաքին և նյութական իրողությունների մասին անձի և մարմնի միջոցով: Յոգու զգայական կարողություններն են **հավատքի**, **հույսի**, **երկյուղածության**, **աղոթքի** և **երկրպագության** հոգևոր ունակությունները:

Իր անկում չապրած վիճակում մարդու հոգին լուսավորվում էր երկնքից, բայց երբ մարդկային ցեղն ընկավ Ադամի միջոցով, մեղքը փակեց հոգու պատուհանը և իջեցրեց վարագույրը, և հոգու սրահը դարձավ մահվան սրահ, և այդպիսին էլ մնում է ամեն մի վերստին չծնված սրտում, քանի դեռ Սուրբ Յոգու կյանք և լույս տվող զորությունը չի հեղեղում այդ սրահը **ՔՐԻՍՏՈՍ ՅԻՍՈՒՍՈՒՄ ՆՈՐ ԿՅԱՆՔԻ** կյանք ու լույս տվող զորությամբ: Այդ ժամանակ մենք

հասկանում ենք, թե ինչն է **«բնական»** մարդը չի կարող հասկանալ հոգևոր իրողությունները: Նա չի կարող հասկանալ դրանք, քանի դեռ նրա հոգևոր բնությունը չի նորոգվել:

Բացի այն, որ բնական մարդու հոգին խավարած է, նրա կամքը պահապանի պես կանգնած է հոգու դռանը և թույլ չի տալիս, որ Սուրբ Յոգին մուտք գործի: Սուրբ Յոգին չի կարող մուտք գործել մարդու հոգու մեջ և բնակություն հաստատել այդտեղ, քանի դեռ մարդու կամքն անձնատուր չի եղել Յոգու սրի՝ Աստծո խոսքի միջոցով:

